



**Նախագահ  
Դիտեր Ֆ. Ուխտորֆ**  
Առաջին Նախագահության  
Առաջին Խորհրդական

# Օղակված Նրա քնքրուշ բազուկներում

**Շ**ատերի նման ես էլ հաճախ ոգեշնչվել եմ արվեստի գեղեցիկ գործերով և երաժշտությամբ: Նման մի առիթ եղավ, երբ ես կանգնած էի մի հիանալի նկարի առջև, որի հեղինակը դանիացի նկարիչ Ֆրանց Ըվարցն էր, որը կոչվում էր *Պարտեզում տարած տառապանքը*:<sup>1</sup>

Այս տխուր, բայց գեղեցիկ նկարում պատկերված է Գեթսեմանիի Պարտեզում ծնկի եկած Փրկիչը: Մինչ Նա աղոթում է, մի հրեշտակ է կանգնում Նրա կողքին՝ քնքշորեն գրկելով Նրան, առաջարկելով մխիթարություն, երկնային օգնություն և աջակցություն:

Որքան երկար եմ ես մտորում այս նկարի շուրջ, այնքան ավելի շատ եմ իմ սիրտն ու միտքը լցվում քնքշության և երախտագիտության աննկարագրելի զգացմունքներով: Ես կարողանում եմ նվազագույն չափով զգալ, թե ինչ է նշանակում ներկա գտնվել այնտեղ, երբ Փրկիչը սկսեց Իր մահկանացու կյանքի մեծ կիզակետային աշխատանքը՝ Իր վրա վերցնելով աշխարհի մեղքերը: Ես հիանում եմ անսահման սիրով և կարեկցանքով, որ Հայրն ունի Իր զավակների հանդեպ: Ես լցված եմ խորը երախտագիտությամբ այն ամենի համար, որ ամենը Որդին արեց ողջ մարդկության և ինձ համար:

**Աստծո Որդու զոհաբերությունը**

Ամեն տարի այս ժամանակաշրջանում մենք հիշում և խորհում ենք զոհաբերության մասին, որը Հիսուս Քրիստոսը կատարեց ողջ մարդկության համար:

Այն, ինչ Փրկիչն արեց մեզ համար Գեթսեմանիից սկսած մինչև Գողգոթա, վեր է հասկանալու իմ ունակությունից: Նա Իր վրա վերցրեց մեր մեղքերի բեռը և վճարեց հավերժական և պարտավորեցնող փրկագին ոչ միայն Ադամի առաջին օրինագանցության համար, այլ նաև միլիարդավոր հոգիների մեղքերի և օրինագանցությունների համար, ովքեր երբևիցե ապրել են: Այս հավերժական, սրբազան զոհաբերությունը ստիպեց «նույնիսկ Աստծու, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտից և տառապել՝ թե մարմնով, թե ոգով» (ՎԼՈՒ 19.18):

Նա տառապեց ինձ համար:

Նա տառապեց ձեզ համար:

Իմ հոգին լցվում է երախտագիտությամբ, երբ ես խորհում եմ այս զոհաբերության թանկագին իմաստի մասին: Ինձ խոնարհեցնում է իմանալը, որ բոլորը, ովքեր ընդունում են այս պարզևս և խոնարհ սրտով դառնում են դեպի Նա, կարող են ներվել և մաքրվել իրենց մեղքերից, անկախ այն բանից, թե որքան մեծ է նրանց ունեցած բիծը կամ որքան ծանր է նրանց բեռը:

Մենք կարող ենք ևս մեկ անգամ դառնալ անբիծ ու մաքուր: Մենք կարող ենք փրկվել մեր սիրելի Փրկչի հավերժական զոհաբերության միջոցով:

**Ո՞վ կմխիթարի մեզ:**

Չնայած, որ մեզանից ոչ մեկը երբևէ ստիպված չի լինի տանելու այնքան խորը տառապանք, ինչպիսին տարավ մեր Տերը, մեզանից յուրաքանչյուրը կունենա

մեր սեփական խավար ու դառը ժամերը. պահեր, երբ մեր վիշտն ու տառապանքը կարող են թվալ ավելի մեծ, քան մենք կարող ենք տանել: Կլինեն պահեր, երբ մեր մեղքերի ծանրությունը և խղճի խայթը անողորմաբար կճնշեն մեզ:

Նույնիսկ այդ դեպքերում, եթե մենք այդ պահերին բարձրացնենք մեր սրտերն առ Տերը, Նա անշուշտ կիմանա և կհասկանա: Նա, ով այդքան անձնուրաց կերպով տառապեց մեզ համար պարտեզում և խաչի վրա, մեզ չի թողնի անմխիթար վիճակում հիմա: Նա կգորացնի, կքաջալերի և կօրհնի մեզ: Նա կօղակի մեզ Իր քնքուշ բազուկներում:

Նա մեզ համար կլինի ավելին, քան հրեշտակը:

Նա կբերի մեզ օրհնյալ մխիթարություն, բուժում, հույս և ներում:

Քանի որ Նա մեր Քավիչն է:

Մեզ Ազատողը:

Մեր ողորմած Փրկիչը և մեր օրհնյալ Աստվածը:

#### ՀՂՈՒՄ

1. Քահանան, ով խոսել է Ֆրանս Շվարցի հուղարկավորման ժամանակ, ասել է. «Նրա արվեստն աստվածային օժտում ուներ և թվում էր ավելի աժեքավոր, քան շատ քարոզներ» (Emmilie Buchanan-Whitlock, “History of Artists’ Lives Gives Greater Context for Exhibit,” *Deseret News*, Sept. 29, 2013, deseretnews.com):

### ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐԶԻՑ

Նախքան ուսուցանելը փնտրեք Հոգու առաջնորդությունը, որպեսզի այն օգնի ձեզ հասկանալ նրանց յուրահատուկ կարիքները, ում ուսուցանում եք: Երբ դուք կիսվեք Նախագահ Ուիլյամսի ուղերձով, վկայեք Փրկչի և Նրա փրկագնող զոհաբերության մասին: Խորհեք, թե ինչպես կարող եք հարցնել նրանց, ում դուք սովորեցնում եք, թե ինչ նշանակություն ունի նրանց համար Նրա Քավությունը և թե ինչպես են նրանք զգացել Տիրոջ մխիթարությունը իրենց «խավար և դառը ժամերի» ընթացքում:

### ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

## Հաղթանակ Հիսուս Քրիստոսի միջոցով

Անանուն

Ես խնդիր ունեի չափից շատ ուտելու հետ կապված: Անընդհատ ուտելու իմ ցանկության

դեմ պայքարը հանգեցրեց մեղքի, բարկության և հիասթափության մեծ զգացում ունենալուն: Ես ինձ շատ թույլ զգացի, երբ փորձում էի հաղթահարել իմ խնդիրը:

Երկար ժամանակ ես անտեսում էի այն փաստը, որ Փրկչի Քավությունը ոչ միայն փրկում է մեզ, այլ նաև ազատում է մեզ և կատարելագործում է մեզ, և որ սա նույնիսկ վերաբերվում է չափից շատ ուտելու իմ ակնհայտորեն անկատար սոսկությունը:

Ես որոշեցի հանձնել ինձ իմ Փրկչին: Ես աղոթեցի: Ես անկեղծորեն ընդունեցի իմ թուլությունը և ողորմության կարիք ունենալը, և ապա ես խնդրեցի Երկնային Հորը առաջիկա օրը օրհնել ինձ Իր աստվածային աջակցությամբ : Այդ գիշեր ես զգացի սիրող Հոր հավաստումը, որ Նա անչափ մեծ ցանկություն ուներ օգնելու Իր որդուն և անվիճելի իշխանություն՝ կատարելու Իր կամքը:

Այդ գիշերվանից սկսած ուտելիքն այլևս այդ նույն անհաղթահարելի ազդեցությունը չի ունեցել ինձ վրա: Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսն է իմ հաջողության պատճառը: Ճիշտ ինչպես Պողոսը, ես սովորում եմ, որ «Ամեն բան կարող եմ ինձ գորացնող Քրիստոսով» (Փիլիպպեցիս Դ.13): Եվ ես փորձում եմ երբեք չմոռանալ մեկ այլ դաս, որը տվել է Պողոսը. «Շնորհակալություն Աստուծուն, որ տուաւ մեզ յաղթութիւնը մեր Տեր Յիսուս Քրիստոսի ձեռովը» (Ա Կորնթացիս ԺԵ.57):

### ԵՐԵԽԱՆԵՐ

## Փրկիչը կմխիթարի ձեզ

Ընտանիքի անդամին կամ ընկերոջը հարցրեք մի այնպիսի ժամանակի մասին, երբ նա մխիթարություն է զգացել Փրկչի կողմից: Փորձեք մտածել մի այնպիսի ժամանակի մասին, երբ Փրկիչը մխիթարել է ձեզ: Դուք կարող եք նկարել այդ փորձառությունը և կախել այն ձեր մահճակալի կողքին, որպեսզի այն հիշեցնի ձեզ, որ Հիսուս Քրիստոսը միշտ ձեր կողքին կլինի ձեզ մխիթարելու համար:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *First Presidency Message, March 2015*-ի թարգմանությունը: Armenian. 12583 201



# Հիսուս Քրիստոսի հատկանիշները. Երկայնամիտ ու համբերատար

Աղոթքով ուսումնասիրեք այս կտորը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: Փրկչի կյանքը և դերերը հասկանալը ինչպե՞ս կվեճացնեն ձեր հավատքը Նրա հանդեպ և կօրհնեն նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: [Lraugrughy.lds.org](http://Lraugrughy.lds.org) տեղեկության համար, այցելեք [reliefsociety.lds.org](http://reliefsociety.lds.org):

Հավատք, Ընտանիք,  
Սփոփանք

Սա Այցելող Ուսուցիչների Ուղեորանների այն շարքից է, որը նախատեսված է Փրկչի հատկանիշներին:

Հաճախ կարծում են, որ համբերությունը հանգիստ, պասիվ հատկանիշ է, սակայն, ինչպես ասել է Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆը, «համբերությունը ճակատագրին պասիվորեն հնազանդվելը կամ մեր վախերի պատճառով չգործելը չէ: Համբերությունը նշանակում է ակտիվ սպասել և տոկալ: Դա նշանակում է համառորեն դիմանալ . . . անգամ երբ մեր սրտի ցանկությունները ձգձգվում են: Համբերությունը պարզապես դիմանալը չէ. դա լավ դիմանալն է»:

Մեր նախաերկրային կյանքում մեր Երկնային Հայրը ծրագիր պատրաստեց մեզ՝ Իր հոգևոր զավակների համար, և մենք ուրախությունից ցնծում էինք աշխարհ գալու հնարավորության համար (տես Հոբ ԼԸ.7): Երբ մենք ընտրեցինք համաձայնեցնել մեր կամքը Նրա կամքի հետ մեր մահկանացու կյանքի ընթացքում, Նա «կդարձնի [մեզ] մի գործիք [Իր] ձեռքերում՝ ի փրկություն շատ հոգիների» (Ավմա 17.11):

Նախագահ Ուլտորֆը շարունակում է. «Համբերությունը նշանակում է ընդունել այն, ինչ չի կարող

փոխվել, ընդունելով այն քաջությամբ, շնորհով և հավատքով: Դա նշանակում է լինել «հոժար՝ ենթարկվելու բոլոր բաներին, որոնք Տերը հարմար է տեսնում բերել [մեզ] վրա, ճիշտ ինչպես երեխան է ենթարկվում իր հորը» [Մոսիա 3.19]: Ի վերջո, համբերությունը նշանակում է լինել «կայուն ու հաստատուն, անխախտ՝ Տիրոջ պատվիրանները պահելիս» [1 Նեփի 2.10] ամեն օր ու ամեն ժամ, երբ անգամ դժվար է դա անել»<sup>1</sup>:

**Լրացուցիչ սուրբ գրություններ**  
Մադմոս Խ.1, Գաղատացիս Ե.22–23, Բ Պետրոս Ա.6, Ավմա 17.11

**Սուրբ գրություններից**  
Սուրբ գրություններն ասում են մեզ, որ մեր մահկանացու կյանքում մենք պետք է լինենք «համբերող շարչարանքներում, քանզի [մենք] շատ կունենանք»: Ապա Աստված տալիս է այս մխիթարող խոստումը. «Դիմացիր դրանց, քանի որ, տե՛ս, ես քեզ հետ եմ, նույնիսկ մինչև քո օրերի վերջը» (ՎևՈՒ 24.8):

Աստվածաշնչյան հետևյալ պատմությունը համբերության ու հավատքի մի օրինակ է. «Եւ մի կին կար տասներկու տարուց հետո տեռատեսութեան

մեջ . . . [Քրիստոսի] հանդերձի ծայրին դպաւ. եւ իսկոյն նորա արինի վազելը կանգնեց: Եւ Յիսուսը ասեց, . . . Մեկը դպաւ ինձ. որովհետեւ ես իմացայ՝ որ զօրութիւն դուրս եկաւ ինձանից: Եւ երբոր տեսաւ կինը, որ ծածուկ չմնաց, դողալով եկաւ՝ նորա առաջին ընկաւ, եւ բոլոր ժողովրդի առաջին պատմեց նորան, թէ ինչ պատճառով նորան դպաւ, եւ թէ ինչպէս իսկոյն բժշկուեցաւ:

Նա էլ ասեց նորան. Քաջացիր, դուստր, քո հաւատքը բժշկեց քեզ, զնա խաղաղութիւնով» (Ղուկաս Ը.43–48):

Նրա նման մենք էլ կարող ենք գտնել օրհնություններ և մխիթարություն, և նույնիսկ բուժում, երբ մենք մոտենանք Հիսուս Քրիստոսին, ում Քավությունը կարող է բուժել մեզ:

**ՀՂՈՒՄ**  
1. Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Համբերությամբ շարունակենք», *Liahoni*, մայիս 2010, 57, 59:

**Խորհեք այս մասին**  
Ըստ Ղուկաս Ը-ի, ինչպե՞ս պարզապես կարող էք այս կնոջ տարիներ շարունակ համբերելը և ապա նրա հավատքն առ Հիսուս Քրիստոսը: